


ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ՄԵՐ ԵՐԱԶԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԴԱՐՁՆԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

«ՊՐԵՍՏԻԺ» ԱՄՍԱԳՐԻ
ԶՐՈՒՑԱԿԻՑՆ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ
ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆԸ



- Տիկին Գալոյան, չնայած Ձեր երիտասարդ տարիքին՝ Դուք կրթության և գիտության ոլորտում երկարամյա աշխատանքային փորձառություն և հաջողություններ ունեք, այդ թվում՝ ՀՊՏՀ-ում: Շուրջ մեկ տարի է, ինչ ՀՊՏՀ ռեկտորն եք, նախ ուզում եմ հարցնել՝ ինչպե՞ս եք Ձեզ զգում այս շատ կարևոր և պատասխանատու պաշտոնում, զորն էր առաջին աշխատանքը, որ կատարեցիք որպես ռեկտոր, և ի՞նչ կարգով է այսօր կազմակերպվում դասապրոցեսը:

- Համալսարանն ինձ համար ոչ միայն աշխատավայր է, այլև իմ տունն ու ընտանիքը: Ես մանկուց որոշակի կապ եմ ունեցել համալսարանի հետ. ծնողներս աշխատել են այստեղ, դեռ մանուկ հասակից ճանաչել եմ բոլորին: Պատահական չի եղել, որ ընդունվել եմ հենց այս համալսարան: Պատասխանատվությունը շատ մեծ է, որովհետև ներկայիս կառավարման համակարգում ամբողջ պատասխանատվությունը, բոլոր հարցերի հետ կապված, ռեկտորի ուսերին է: Սակայն, երբ սիրում ես գործը,

զգում ես կոլեկտիվիդ և ուսանողներիդ աջակցությունը՝ հաճույքով ես վերցնում քեզ բաժին հասած պատասխանատվությունը:
Առաջինն աշխատանքային մթնոլորտի փոփոխությունն էր և բուռի ներկայի ու ապագայի համար կոլեկտիվ պատասխանատվության զգացողության ձևավորումը: Այժմ էական փոփոխություններ կան. բոլոր շահառուների ընկալումներում արձանագրում ենք էական դրական տեղաշարժեր յուրաքանչյուր աշխատակից ավելի հաճույքով է աշխատում, ավել-

ի մեծ պատրաստակամությամբ է աշխատանքի գալիս: Կարծում եմ՝ սերը դեպի աշխատանքային գործընթացը մեծ նշանակություն ունի աշխատանքի բարձր արդյունավետությամբ իրականացնելու տեսանկյունից:
Այս պահին դասապրոցեսն իրականացվում է հիբրիդային տարբերակով՝ և՛ առցանց, և՛ համալսարանում: Դասերը բաժանել ենք երեք հերթի, որպեսզի հնարավորինս քիչ ուսանողներ միաժամանակ գտնվեն բուռում:



- Ձեր պաշտոնավարման այս կարճ ժամանակահատվածում շատ բան է փոխվել բուհում. փոփոխություններ են կատարվել կրթական ծրագրերում, ընդլայնվել են համագործակցության շրջանակները, միջոցառումների պակաս չկա բուհում: Կինդերմ՝ նախ ներկայացնեք Ձեր մոտեցումը՝ ինչն էք կարևորում կրթական ծրագրերում, ինչ փոփոխություններ են կատարվել դրանցում:

- Ամենաէական փոփոխությունը, որ կատարվել է, գործնական ոլորտի մարդկանց համալսարան բերելն է: Անընդհատ խոսվում է, որ բուհերը կտրված են գործնական միջավայրից, գործատուից: Գործատուները հաճախ դժգոհում են, որ ուսանողներն ավարտելուց հետո աշխատավայր են մուտք գործում առանց գործնական և հաղորդակցման հմտությունների: Այդ իսկ պատճառով հատկապես, երբ ձևավորվեցին նոր մագիստրոսական կրթական ծրագրերը, դրանք բոլորը սկսեցինք իրականացնել կոնկրետ գործատուների հետ: Սա շատ մեծ ոգևորությամբ ընդունվեց հենց գործատուների կողմից, որովհետև նրանք էլ բուհի մի

մասը կազմելու հնարավորություն ստացան: Այս համագործակցության շնորհիվ ուսանողները կարողանում են լրացնել այն բացը, որից տարիներ շարունակ դժգոհել են աշխատավայրերում: Մեզ մոտ դասավանդող գործատուները, անմիջապես մոդուլի ավարտից հետո, ուսանողներին ընդունում են փորձաշրջանի, թրեյնինգների և իրենց հմտությունները փոխանցում:

Մյուս փոփոխություններից մեկը համալսարանում բացված Change Lab-ն է՝ փոփոխությունների լաբորատորիան: Այստեղ ուսանողները ևս ներգրավվում են գործատուների հետ աշխատանքային գործընթացին: Գործատուները մեզ ներկայացնում են իրենց մոտ առկա թափուր հաստիքները, մենք մեր մենթորների միջոցով ուսանողներին ենք փոխանցում տվյալ աշխատանքի համար համապատասխան հմտությունները, այնուհետև, գործատուների հետ հանդիպելուց հետո, ուսանողները միանգամից համալրում են թափուր հաստիքները: Բավական մեծ թվով ուսանողներ աշխատանքի են անցել հենց Change Lab-ի միջոցով:

ԱՎԱԳ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՄԲ ՓՈՐՁՈՒՄ ԵՆՔ ՀԱՄՆԵԼ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ

- Որո՞նք են պետական և մասնավոր ընկերությունների հետ համագործակցության ամենանշանակալի ծրագրերը, որոնք ուսանողի մասնագիտական աճի առումով հատկապես կարևորում եք:

- Այս պահին ակտիվորեն համագործակցում ենք պետական կառույցներից Առողջապահության նախարարության, Էկոնոմիկայի նախարարության, մասնավորապես՝ ներդրումների վարչության հետ: Նաև համագործակցում ենք ԿԳՄՍ նախարարության, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության քաղաքացիական ավիացիայի կոմիտեի, միգրացիայի ծառայության, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության, ՊԵԿ-ի հետ: Անցյալ տարի մեր բուհի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը հայտարարեց հետազոտական ծրագրերի իրականացում պետական գերատեսչությունների հետ համատեղ: Մեր հետազոտողներն իրականացրին պետության համար գերակա հանդիսացող տնտեսական խնդիրների լուծման հետ կապված հետազոտություններ և բավականին հաջողություններ գրանցեցին: Այս պահին նույնպես այդ մրցույթը հայտարարված է և սպասում ենք հետազոտողների հայտերին: Մասնավոր ընկերությունները ևս շատ ինտենսիվ են մեզ հետ համագործակցում: Կարող եմ ասել, որ մենք ծածկել ենք գրեթե ամբողջ բանկային սեկտորը: Բոլոր բանկերի հետ ունենք համագործակցության հաջողված քեյսեր, գրեթե բոլոր բանկերից դասավանդողներ ունենք, իսկ ուսանողներն այդ բանկերում փորձաշրջան են անցնում: Մասնավոր ոլորտից մեր գործընկերների շարքում են նաև մարքեթինգային ընկերությունները: Բավականին խորացրել ենք համագործակցությունը միջազգային գործընկերների, այլ բուհերի հետ: Հատկապես ակտիվ գործընթացում են ուսանողների փոխանակման ծրագրերը: Մինչ օրս շեշտը դրվում էր հատկապես եվրոպական բուհերի վրա, բայց այժմ ուղղություն ենք վերցրել դեպի Չինաստան և Ռուսաստան, որպեսզի համագործակցությունն իրականացվի և կապերն աշխուժանան նաև այս տարածաշրջանի բուհերի հետ:

- Բուհը համագործակցության հուշագրեր է ստորագրել տնտեսության մասնավոր



հատվածի այնպիսի ընկերության հետ, ինչպիսին «Կոկա-Կոլա Հելլենիկ Արմենիա»-ն է: Ինչ հնարավորություններ են ստեղծվում նման համագործակցությունների արդյունքում:

- «Կոկա-Կոլա»-ն երազանքի ընկերություն է համարվում տնտեսագիտություն և բիզնես ուսումնասիրող ուսանողների համար: Այս ընկերությունը հայաստանյան շուկայում շատ սերտ համագործակցում է ակադեմիական միջավայրերի հետ: Իրենց տարբեր ոլորտների մասնագետները մեր ուսանողների համար դասախոսում են համալսարանում. առաջին դասախոսությունը կարդացել է ընկերության տնօրենը: Դասախոսությունների շարքը շարունակվում է ընկերության տարբեր բաժինների մասնագետների հյուրընկալմամբ՝ կախված տվյալ օրվա դասընթացի թեմայից: Կազմակերպությունը նաև մեր ուսանողներին հյուրընկալում է «Կոկա-Կոլա» ընկերության գործարանում, ծանոթացնում արտադրական գործընթացին: Համագործակցության հուշագրի մեջ մտնում է նաև ուսանողների աշխատանքի տեղավորումը: Կարծում եմ՝ սա ամենաարդյունավետ համագործակցություններից մեկն է:

- Վերջերս բուհում հյուրընկալել էիք Նիդերլանդների Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան Նիկո Սխերմերսին, հանդիպման շրջանակներում հայտարարվեց ուսանողների էսսեների մրցույթ: Ինչպիսիք են հանդիպման և մրցույթի արդյունքները:

- Տնտեսագիտական համալսարանը վերջին երկու տարիների ընթացքում «Էրազմուս+» ծրագրի շրջանակներում՝ «Ժան Մոնե մոդուլ» և «Ժան Մոնե նեթվորք» ծրագրերի հաղթող է ճանաչվել: Այս ծրագրերի միջոցով մենք նախաձեռնել ենք ԵՄ անդամ երկրների մի քանի դեսպանների այցեր ՀՊՏՀ: Քանի որ Նիդերլանդների դեսպանատունը նոր է բացվել Հայաստանում, Նիկո Սխերմերսն անձամբ ցանկություն հայտնեց լինել առաջին հրավիրյալ դեսպանը ՀՊՏՀ-ում: Մեզ համար անակնկալ եղավ, երբ նա էսսեների մրցույթ հայտարարեց «Ժան Մոնե մոդուլ»-ի ուսանողների համար՝ հայհոլանդական տնտեսական հարաբերությունների թեմայով: Մրցանակը կլինի այն, որ ուսանողը մեկ ամբողջ օր կանցկացնի դեսպանի հետ, մոտիկից կձանոթանա նրա աշխատանքի բնույթին:

- Կարգ ու կանոնը պահպանելը, պատասխանատու ուսանող կրթելն ու դաստիարակելը շատ կարևոր է ուսումնական գործընթացում: Որպես ռեկտոր՝ ինչ ուղերձով եք հաճախ դիմում ուսանողներին, ինչ պահանջներ եք ներկայացնում,



որոնք նրանք պետք է անպայման կատարեն:

- Նոր սերունդը, մեր սերնդի համեմատ, բավական պահանջկոտ է, ավելի ստեղծարար, ավելի ազատ և ավելի դյուրին է իր մտքերն արտահայտում: Իմ ուղերձը մշտապես եղել է մեկը՝ սովորել:

Շատ կարևոր է, որ մեր առջև դրված նպատակներին հասնելու համար կարողանանք օգտագործել բոլոր մեթոդները: Այսօրվա կրթությունը ավելի մեծ հնարավորություններ է տալիս մասնակցելու թե՛ միջազգային ծրագրերի, թե՛ փորձաշրջանների և բազմաթիվ վարպետության դասերի ու կամավորական աշխատանքների: Ես միշտ հորդորում եմ ուսանողներին ակտիվորեն օգտվել բուհի ընձեռած այս հնարավորություններից, որովհետև ամեն ծրագրից մի փոքր բան վերցնելը հետագայում, ինչոր պահի կարող է շրջադարձային դեր կատարել:

- Մասնակցում եք նաև տարբեր ցուցահանդեսների: Հետաքրքիր է, ինչպիսիք է ուսանողների արձագանքը նման ակտիվ կրթագիտական գոր-

ծընթացի նկատմամբ:

- Մեր բուհում այս հարցերում շատ են օգնում ուսանողները: Նրանք ներգրավված են համալսարանում կազմակերպվող ցանկացած միջոցառման կազմակերպչական գործընթացում: Հաճախ այնպիսի վարպետությամբ են կազմակերպում, որ թվում է՝ «Իվենթ մենեջմենթի» հատուկ կուրսեր են անցել:

- Մի փոքր խոսենք դասախոսական կազմի մասին: Ինչպիսի թիմ է աշխատում բուհում:

- Բուհում այս պահին աշխատում են երկու՝ երիտասարդ և ավագ սերնդի ներկայացուցիչները: Նրանց համատեղումը բավականին արդյունավետ է: Երիտասարդների ներգրավումը շատ եմ կարևորում հատկապես լեզուների իմացության, նոր գիտելիք յուրացնելու, տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու առումով, բայց ավագ սերունդն էլ իր ուրույն տեղն ունի դաստիարակչական,

փորձառության մասով: Հետևաբար, փորձում ենք ավագ և երիտասարդ սերունդների արդյունավետ փոխգործակցության միջավայրի ապահովմամբ՝ հասնել առավելագույն արդյունքի:

Բացի դրանից, մենք նոր կարգ ենք մշակել՝ դասախոսների առեստավորման և վերապատրաստման: Այն բացը, որ առկա է լեզուների իմացության, տեղեկատվական տեխնոլոգիաների, հետազոտական հմտությունների, դասավանդման արդի տեխնոլոգիաների, ինչպես նաև մասնագիտական բնագավառում գիտելիքների թարմացման ուղղություններով՝ դասախոսները կլրացնեն վերապատրաստման, ապա առեստավորման միջոցով: Մենք հնարավորություն ենք տալիս դասախոսներին հարմարվելու «խաղի նոր կանոններին»: Վերապատրաստման ուղղությունները երեքն են՝ մասնագիտական, ոչ մասնագիտական և դասավանդման մեթոդաբանություն: Բոլոր դասախոսները, առանց բացառության, պետք է վերապատրաստվեն:

- Այսօր նորագույն տեխնոլոգիաների կիրառությունը պարտադիր է դարձել բոլոր ոլորտներում, հատկապես՝ տնտեսական: Արդյոք հնարավորություններ կա՞ն դասընթացներն այնպես կազմակերպելու, որպեսզի բուհն ավարտող ուսանողը կարողանա անմիջապես անցնել աշխատանքի, ունենա անհրաժեշտ հմտություններ:

- Մեր բոլոր կրթական ծրագրերում համակարգչային հմտությունները, որպես պարտադիր դասընթաց, առկա է: Սակայն անցյալ տարի բուհը նախաձեռնեց նաև «Համակարգչային հմտություններ» անվճար կարճ դասընթաց, որտեղ վերապատրաստվեցին 200-ից ավելի ուսանողներ: Դեպի նորագույն տեխնոլոգիաների յուրացում մյուս քայլերից մեկն էլ այն էր, որ անցյալ տարի կայացավ «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» բակալավրական ծրագիրը: Նաև ունենք մագիստրոսական ծրագիր՝ «Տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում» մասնագիտացմամբ և հետագայում պլանավորում ենք հայաստանյան տեխնոլոգիական բուհերից մեկի՝ Պոլիտեխնիկական կամ Ճարտարապետության և շինարարության ազգային համալսարանի հետ համատեղ մագիստրոսական ծրագրեր մշակել:

- Առջևում նոր ուսումնական տարին է, արդյոք պատրաստվո՞ւմ եք արդեն, նոր մասնագիտություններ կբացվեն բուհում:

- Դեռևս անցյալ տարի մենք 11 նոր մասնագիտություն լիցենզավորել ենք: Բացի նրանից, որ Առողջապահության նախարարության կողմից լիցենզավորված՝ Hospital management անունով կարճ դասընթաց էինք իրականացնում մեր ուսանողների համար, անցյալ տարի բացեցինք առողջապահության ոլորտին վերաբերող երկու մագիստրոսական ծրագիր՝ «Առողջապահության կառավարում» և «Բուժհաստատության կառավարում»: Ամբողջ աշխարհում ընդունված է, որ բուժհաստատությունների գլխավոր բժիշկները, բացի բժիշկ լինելուց, նաև կառավարչական որոշակի հմտությունների տիրապետեն, ուստի որոշեցինք, որ այս որակավորումը հայաստանյան շուկայում պետք է ապահովի հենց տնտեսագիտական համալսարանը: Հունիսին կունենանք առողջապահության կառավարման ոլորտի մեր առաջին շրջանավարտները:

Այս տարի նոր մագիստրոսական ծրագրեր չենք ունենա, որովհետև իրականացնում ենք աշխատաշուկայի ուսումնասիրություն՝ հասկանալու համար,

թե ինչ նոր մասնագիտությունների կարիք կա: Այս պահին կարող եմ ասել, որ մեր համալսարանում տնտեսագիտության, ֆինանսների, մարքեթինգի, վիճակագրության ոլորտների բոլոր սպեկտրները ծածկող մագիստրոսական ծրագրեր կան:

Այսօր մեր շեշտադրումն առավելապես կատարում ենք որակի բարձրացման վրա՝ ներգրավելով ավելի բարձրակարգ մասնագետների, ուսանողների համար գտնելով փորձառության նոր վայրեր:

- Մասնագիտական ճիշտ ուղղություններն են առավել պահանջված այսօր:

- Բարձր մրցակցային երեք հիմնական ուղղություն կա: Վերջին երկու տարում ամենապահանջվածը մարքեթինգն է, ինչն ուրախալի է, քանի որ դա համապատասխանում է աշխատաշուկայի այսօրվա պահանջարկին: ՀՊՏՀ-ն միակ պետական բուհն է, որն ունի մարքեթինգ մասնագիտությունը: Այս տարի մենք ավելացրել ենք այս մասնագիտության տեղերի քանակը, որովհետև անցյալ տարի ամենաբարձր մրցույթը հենց այս մասնագիտության համար էր: Շարունակում են առաջատար դիրքերում մնալ ֆինանսների ու կառավարման մասնագիտությունները: Դժգոհել չեմ կարող, մեր



բուհում: Գուցե ուրախալի է, որ ավելի շատ առկա կրթությանն են ձգտում ուսանողները: Այնուամենայնիվ, հեռակա կրթությունը գործում է և՛ բակալավրիատի, և՛ մագիստրատուրայի, և՛ ասպիրանտուրայի կրթական ծրագրերի համար:

- Այսօր քանի՞ ուսանող ունի Տնտեսագիտական համալսարանը, քանիսն է նրանցից անվճար, քանիսը՝ վճարովի:

- Այս պահին ՀՊՏՀ-ում սովորում է 6046 ուսանող, որից մոտ 900-ը՝ անվճար: Գերակշիռ մասը՝ 2886-ը, առկա մագիստրատուրայի ուսանողներն են: Անցյալ տարվա համեմատ, մեր ուսանողների թիվը բավական աճել է՝ 5269-ից հասնելով 6046-ի՝ շնորհիվ մագիստրատուրայի և բակալավրիատի աննախադեպ ընդունելության:

- Ասում են, որ այսօր կրթական մակարդակը բավական իջել է դպրոցներում: Ինչպես են դիմորդները հաղթահարում բուհ ընդունվելու համար նախատեսված անցողիկ շեմը:

- Եթե հարցադրումը ձևակերպենք այսպես՝ «Ինչ անել, որպեսզի բուհ ընդունվել», գուցե հասկանանք, որ շատ բան պետք չէ անել: Այժմ, այո, մրցակցությունը նվազել է, շրջանավարտների թիվը գնալով պակասում է և բավական է երեք 8 կամ երեք 7,5 ստանալ և կարող են որևէ բուհում, որևէ մասնագիտությամբ ուսանող դառնալ: Ես կարծում եմ, որ պետք է ոչ թե շեմի, այլ որակի հարց դնել: Դրանով պետք է զբաղվել հենց դպրոցից: Առաջնահերթություն պետք է դիտարկվի ոչ թե շեմը հաղթահարելը, այլ որակյալ կրթություն ստանալը:

Կարծում եմ՝ բավականին փոխվել է այս մոտեցումը: Ուսանողները գիտակցում են, որ խնդիրը դիպլոմ ստանալը չէ, այլ սովորելը:

- Առաջիկայում իրականացվելիք ինչ ծրագրեր ունեք:

- Ապագայի համար սկսել ենք միջազգայնացման գործընթացը և բավականին հաջողություններ ունենք այս առումով: Մի քանի կարևոր հանգամանք պետք է նշեմ. Տնտեսագիտական համալսարանն անցյալ տարի առաջին անգամ վարկանշավորվեց համաշխարհային հոշակ ունեցող՝ QS world Ranking միջազգային վարկանիշում: Այս տարի առաջին անգամ մենք տեղ գտանք համաշխարհային բու-

բոլոր մասնագիտություններն էլ համալրվում են, մրցույթները բարձր են նաև տնտեսագիտության, հաշվապահության ու վիճակագրության մասնագիտությունների գծով: Նոր մասնագիտությունները՝ սերվիսը, տուրիզմը, տեղեկատվական տեխնոլոգիաները, ակտուարական մաթեմատիկան ևս բավական բարձր պահանջարկ ունեն:

- ՀՊՏՀ կարող են դիմել միայն ավագ դպրոց ավարտած աշակերտները, թե՞ ունեք նաև մինչ-բուհական կրթական հաստատություն:

- Մեր համալսարանին կից գործում է ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջը, որի կազմում՝ միջին մասնագիտական ուսումնարանը: Քոլեջ կարող են ընդունվել 9-րդ դասարանը ավարտած դպրոցականները: Երեք տարի ուսումնառելուց հետո, եթե գերազանցիկ են, հարցազրույցով կընդունվեն միանգամից ՀՊՏՀ հեռակա երկրորդ կուրս, եթե ոչ, ուրեմն միասնական քննությունների միջոցով կընդունվեն առաջին կուրս:

- Ո՞ր բաժիններն ունեն հեռակա կրթություն և որոնք են առավել պահանջված:

- Հեռակա կրթություն ունենք բոլոր բաժինների համար: Չեմ կարող ասել, որ առաջվա պես պահանջարկը մեծ է հեռակա կրթության հանդեպ: Բնական է, որ հեռակա կրթության որակը չի կարող համեմատվել առկա կրթության որակի հետ: Այսօր ունենք թափուր տեղեր հեռակա բաժիններ



հերը վարկանշավորող Times impact Ranking-ում, որտեղ հայաստանյան բուհերից միայն ՀՊՏՀ-ին է հաջողվել վարկանշավորվել: Բացի դրանից, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնն արդեն չորս տարի շարունակ Փենսիլվանիայի համալսարանի ուղեղային կենտրոնների վարկանշավորման աղյուսակում դասվում է աշխարհի 100 լավագույն համալսարանական ուղեղային կենտրոնների շարքին՝ ամեն տարի բարելավելով նախորդ տարվա ցուցանիշը: Կարող եմ ասել, որ միջազգային ճանաչում ձեռք բերելու առումով մենք լուրջ հաջողություններ ենք գրանցել, բայց դա չի նշանակում, որ այսքանով բավարարվելու ենք ու կանգ առնենք:

Տնտեսագիտական համալսարանում այս տարի բացվել է նաև ֆոնդահայթայթման բաժինը, որը բացառապես զբաղվելու է արտերկրի ֆոնդերի ներգրավմամբ: Հայաստանյան բուհերի ամենամեծ խնդիրներից մեկն այն է, որ բյուջեները սահմանափակ են և հիմնականում կախված են ուսանողների վարձավճարներից: Այս առումով, ֆոնդերի ներգրավումը մենք շատ ենք կարևորում, և, թերևս, ՀՊՏՀ-ն առաջին բուհն է, որ նպատակային կերպով այդպիսի բաժին է ստեղծել:

Կա ևս մեկ խնդիր մեր համալսարանում, որը դեռևս լուծված չէ՝ օտարերկրյա ուսանողների ներգրավումը: Այժմ լիցենզավորման փուլում ենք՝ բակալավրիատի և մագիստրոսական ծրագրերի անգլերեն տարբերակի համար և համագործակցում ենք տարբեր երկրներում մեր դեսպանների հետ, որ կարողանանք ընդգրկել այլազգի ուսանողների: Վստահ եմ՝ մեր թիմը հաջողության կհասնի նաև այս հարցում:

- Ի՞նչը կցանկանայիք փոխել կրթական համակարգում, որն իդեալականին կմոտեցնեք այն:

- Նախ, մեկ գործոն փոխելով այս հարցը հնարավոր չէ լուծել: Ես կարծում եմ, որ հենց այն ծրագրերը, որոնք մեր համալսարանն իրականացնում է՝ և՛ օտարերկրյա ուսանողների ընդգրկումը, և՛ նոր կրթական ծրագրերի բացումը, և՛ կարճատև դասընթացների ներդրումը, գործնական ոլորտից մասնագետների ներգրավումը և այլ ծրագրեր, միայն ամբողջանալով կարող են նպաստել կրթական համակարգի իդեալական դառնալուն: Դրանցից որևէ մեկը առանձին չի կարող ցանկալի արդյունքին մոտեցնել:

- Տիկին Գալյան, կարծում եմ՝ կհամաձայնեք, որ ժամանակակից հայուհիներն իրենց նախաձեռնողականությամբ տարբերվում են նախորդ սերնդից: Այսօր բոլոր որոշումներում տեսնում ենք կին հաջողակ ղեկավարների, ովքեր իրենց կա-



րողություններով չեն զիջում տղամարդկանց: Ինչպիսին է եղել Ձեր անցած ուղին, դժվարություններ ունեցել եք:

- Դժվարություններ շատ եմ ունեցել և շարունակում եմ ունենալ: Ես մի փոքր կողմ չեմ կին կամ տղամարդ ղեկավարի բաժանմանը, բայց կարծում եմ, որ կանանց հետ աշխատելն ավելի հեշտ է: Կանայք ավելի ճկուն են, ավելի մեղմ, ավելի հեշտ են հարմարվում փոփոխություններին, ավելի հակված մասնակցային կառավարմանը: Այնուամենայնիվ, կարծում եմ, որ կառավարչի ջիղ ունենալը շատ կարևոր է ղեկավար պաշտոն զբաղեցնելու համար:

Երբեք չեմ վախեցել դժվարություններից: Ես հանձնվել չգիտեմ: Տնտեսագիտական համալսարանը մեր երազած համալսարանը դարձնելու ճանապարհին մեզ ոչ ոք չի կարող խոչընդոտել:

- Ո՞րն է Ձեր երազած համալսարանը, որին ձգտում եք հասնել:

- Ինձ համար առաջին չափանիշը շահառուների իրական բավարարվածությունն է: Դա այն համալսարանն է, որն ավարտող ուսանողներն իրենց կարողունակությամբ աշխատաշուկայում իսկապես կլինեն պահանջարկված և մրցունակ:

- Ո՞րն եք համարում հայ կնոջ ֆենոմենը՝ սերունդ կրթող, դաստիարակող անձ:

- Ես կարծառապես չեմ առաջնորդվում: Ինքս մայր եմ և կարծում եմ, որ մոր, ղեկավարի, կնոջ ու

սերունդ կրթողի դերերը կարելի է լավագույնս համատեղել՝ լինել հաջողակ կին, լավ մայր, լավ դաստիարակող, լավ դուստր, կառուցել կարիերա: Այն կարծառապես, որ հայ կինը միայն օջախ պահող

**ԿԱՐԾՈՒՄ ԵՄ՝
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ
ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՍ
ԳԱՂՏՆԻՔԸ ՄԵՐ ԹԻՄՆ Է**

կինն է, կարծում եմ, վաղուց արդեն «կոտրելու» ժամանակն է, և հայ կինն այնքան ուժեղ է, որ կարող է այդ բոլորը համատեղել:

- Ըստ առաջնահերթության՝ Դուք Ձեզ տեսնում եք որպես մայր, կին, թե՛ ղեկավար:

- Առաջինը տեսնում եմ ինձ որպես մայր, հետո ղեկավար, հետո նոր կին:

- Ո՞րն է Ձեր հաջողության գաղտնիքը:

- Իմ նպատակասլացությունն ու մեր թիմը: Ես սիրում եմ մեր թիմն անվանել «նվիրյալների թիմ»: Շատ կարևորում և գնահատում եմ այն, որ մարդիկ գործն ավարտին հասցնելու համար պատրաստ են տուն չգնալ, որ որևէ բան հանձնարարելուց հետո կարիք չի լինում հետևից ընկնելու, փոխարենը ստանում ես պատրաստի արդյունքը:

Կարծում եմ՝ համալսարանական հաջողությունների գաղտնիքը մեր թիմն է և այն, որ մենք համալսարանը շատ ենք սիրում:

*Հարցազրույցը՝
Մարգարիտա Հարությունյանի*

